

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
2006 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

(համառոտ)

2006 թվականի հոկտեմբերի 11-13-ը Երեւանում տեղի է ունեցել Եվրոպայի խորհրդի անդամ երկրների Արդարադատության նախարարների 27-րդ կոնֆերանսը, որտեղ քննարկվել են տուժողի շահերի պաշտպանությանը, կարգավիճակին եւ իրավունքներին վերաբերող հարցեր: Կոնֆերանսին մասնակցել են 51 ԵԽ անդամ եւ դիտորդ երկրների մոտ 250 ներկայացուցիչներ: Կոնֆերանսի կազմակերպման համար ՀՀ 2006 թվականի պետական բյուջեից հատկացվել է 77,9 մլն դրամ: ՀՀ Նախագահի 07.02.2006թ© թիվ ՆԿ-25-Ա կարգադրությամբ Անվճարունակության (անանկության) ոլորտի գործող օրենսդրության բարեփոխման նպատակով ՀՀ արդարադատության նախարարի ղեկավարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակել է Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել Սնանկության մասին օրենսդրական փաթեթը:

ՀՀ Նախագահի 2006 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆԿ-28-Ա կարգադրությամբ Դատախրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգը մշակելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարի ղեկավարությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը մշակել է Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել ՀՀ դատական օրենսգրքի նախագիծը, Դատախազության մասին ՀՀ օրենքն այս պահին մշակման փուլում է:

I. Կատարված աշխատանքները եւ արդյունքները.

1) Իրավական ակտերի փորձաքննության վարչություն.

2006 թվականին Վարչության կողմից պետական իրավական փորձագիտական եզրակացություններ են տրվել

609 (2005-ին^Ձ 743) ՀՀ օրենքների նախագծերի,

1152 (2005-ին^Ձ 1169) ՀՀ կառավարության որոշումների նախագծերի,

131 (2005-ին^Ձ 255) ՀՀ վարչապետի որոշումների նախագծերի,

14 ՀՀ Նախագահի հրամանագրերի նախագծերի,

683 (2005-ին^Ձ 1130) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ:

2006 թվականի ընթացքում ստացվել են 530 (2005-ին^Ձ 550) գերատեսչական նորմատիվ ակտեր, որոնցից պետական գրանցում են ստացել 440-ը, մերժվել եւ կասեցվել են 90-ը:

2) Դատախրավական բարեփոխումների վարչություն

2006 թվականի ընթացքում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով Վարչության աշխատակիցների կողմից մշակվել են.

գՔրեակատարողական ծառայության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի հունիսի 1-ին,

Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի հունիսի 13-ին,

գՂՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին,

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի մայիսի 25-ին,
ԴԱՀԿ ծառայության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի նոյեմբերի 15-ին,
զՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի նոյեմբերի 15-ին,
գ՝ Փաստաբանության մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 1-ին,
Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահելու մասին՝ ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ ՀՀ օրենք՝ ընդունվել է 2006 թվականի նոյեմբերի 15-ին,
ՀՀ անկախության հռչակման 15-րդ սարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին՝ ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծ՝ ընդունվել է 2006 թվականի հուլիսի 7-ին:
Եվրոպայի Խորհրդի հետ համագործակցությամբ 2006 թվականի հոկտեմբերի կազմակերպվել է Դատապարտյալների դասակարգման եւ տեղաբաշխման (մեկուսացման) մասին փորձագիտական հանդիպում:
Իրականացվել են Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի կողմից ներկայացված զեկույցի կապակցությամբ ՀՀ կառավարության պատասխանը կազմելու համակարգման աշխատանքներ:

3) Վերահսկողության վարչություն

Դատախիրավական բարեփոխումների II փուլի իրականացումն ապահովելու նպատակով մշակվել է արագացված դատաքննություն անցկացնելու կարգի վերաբերյալ օրենսդրական փաթեթը.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագիծը.
ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագիծը.
ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի նախագիծը:

Միաժամանակ՝

քննարկվել եւ պատասխանվել է քաղաքացիներից եւ իրավաբանական անձանցից ստացված 1419 առաջարկությունների, դիմումների եւ բողոքների,
կազմակերպվել եւ անցկացվել է 138 քաղաքացիների ընդունելություն,
վճիռների, որոշումների եւ դատավճիռների հիմնավորվածությունն ուսումնասիրելու նպատակով 2006թ. դատարաններից պահանջվել եւ վերլուծության առարկա են դարձվել 132 քաղաքացիական եւ քրեական գործեր:

Ուսումնասիրության արդյունքներով կազմվել են 117 եզրակացություններ եւ տեղեկանքներ, հայտնաբերված նյութական եւ դատավարական իրավունքի նորմերի խախտումների մանրամասն վերլուծությամբ

Նշված նյութերի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարի կողմից օրենքով սահմանված կարգով 11 դատավորների նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ եւ ներկայացվել են ՀՀ արդարադատության խորհուրդ³ նրանց պատասխանատվության ենթարկելու համար:

Սահմանված կարգով ընթացք է տրվել թվով 263 դատական հանձնարարություններին:

4) Միջազգային իրավական հարաբերությունների վարչություն

1. ՀՀ միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենքին համապատասխան վարչությունը.

ա) իրանական կողմի հետ համաձայնեցրել է ՀՀ եւ ԻԻՀ միջեւ քաղաքացիական եւ քրեական գործերով իրավական օգնության մասին, ինչպես նաեւ հանձնման մասին համաձայնագրերի տեքստերը: Այդ համաձայնագրերը ստորագրվել են Թեհրանում՝ 2006 թվականի հուլիսի 5-ին, ՀՀ Նախագահի ԻԻՀ կատարած պաշտոնական այցի ընթացքում: Համաձայնագրերը ՀՀ Ազգային ժողովը վավերացրել է 2006 թվ. նոյեմբերին.

բ) առաջարկություններ եւ դիտողություններ են նախապատրաստվել կիպրական կողմի ներկայացրած ՀՀ եւ Կիպրոսի Հանրապետության միջեւ քաղաքացիական գործերով իրավական օգնության մասին պայմանագրի նախագծի վերաբերյալ:

Առաջարկությունները եւ դիտողությունները սահմանված կարգով ներկայացվել են կիպրական կողմին՝ տեքստի փոխհամաձայնեցման համար.

գ) վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից բխող օրենսդրական փոփոխություններ կատարելու նպատակով մշակվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին՝ եւ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը եւ սահմանված կարգով ներկայացվել ՀՀ կառավարություն:

Նշված օրինագծերը քննարկվել եւ ընդունվել են Ազգային ժողովի 2006 թվականի գարնանային եւ աշնանային նստաշրջաններում.

դ) հայերեն եւ թարգմանվել Կոռուպցիայի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, ինչպես նաեւ ընտանեկան բռնության, որդեգրման, ծնողական պարտականությունների կատարման, կտակների, արդարադատության մատչելիության հարցեր կարգավորող 7 եվրոպական կոնվենցիաներ, որոնք տարվա ընթացքում սահմանված կարգով ներկայացվել են Ազգային ժողով եւ վավերացվել նրա կողմից.

ե) մշակվել է ՀՀ եւ Իտալիայի Հանրապետության միջեւ իրավական ոլորտում համագործակցության մասին պայմանագրի նախագիծը եւ սահմանված կարգով ներկայացվել իտալական կողմին.

զ) Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության հետ աշխատանքներ են կատարվել երկու երկրների արդարադատության նախարարությունների միջեւ համագործակցության մասին համաձայնագրից բխող գործնական ծրագրի կազմման ուղղությամբ:

2. Տարվա ընթացքում երկու անգամ շրջանառության մեջ է դրվել ՀՀ միջազգային պայմանագրերի մասին օրենքի նախագիծը, որը կրկնակի լրամշակման է ենթարկվել, տեքստը փոխհամաձայնեցվել է ՀՀ ԱՆ հետ եւ ներկայացվել ՀՀ կառավարություն:

2006թվ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովն օրինագիծն ընդունել է առաջին ընթերցմամբ:

3. Նախապատրաստվել են պատասխաններ հետեւյալ հարցաշարերի վերաբերյալ՝

ա) ԱՕ-ի խմբի.

բ) ԱՊՀ պետությունների ղեկավարների եւ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշումների իրավաբանական նշանակության մասին ԱՊՀ գործադիր կոմիտեի.

գ) ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ պայքարի հարցերով ԵԽ հանձնաժողովի:

4. Աշխատանքներ են տարվել կոռուպցիայի հարցերով անցումային տնտեսություններով երկրների

հակակոռուպցիոն ցանցի կողմից Հայաստանի Հանրապետությանը ներկայացված երաշխավորությունների՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավասությանը վերաբերող միջոցառումների իրականացման ուղղությամբ:

5. Կազմվել է տեղեկատվություն ԵՄ անդամակցության հետ կապված ՀՀ կողմից ստանձնած այն պարտավորությունների կատարման վերաբերյալ, որոնք առնչվում են ՀՀ արդարադատության նախարարության իրավասության ոլորտներին:

6. Վարչությունն առաջարկություններ է ներկայացրել ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների կողմից ներկայացրած շուրջ 90 միջազգային պայմանագրերի նախագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկանքներ՝ վավերացման կամ հաստատման ներկայացվելիք ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների և ՀՀ օրենսդրության միջև հակասության կամ դրա բացակայության մասին:

7. Վարչությունը մասնակցություն է ունեցել ՀՀ օրենսդրությունը ԵՄ իրավական ակտերով սահմանված չափանիշներին համապատասխանեցնելու վերաբերյալ Ազգային ծրագրի, ինչպես նաև Հայաստան-ԵՄ նոր հարեւանության քաղաքականության համագործակցության գործողությունների ծրագրի մշակման, դրանցից բխող ՀՀ արդարադատության նախարարության իրավասության ոլորտներին առնչվող ծրագրերի և ժամանակացույցերի կազմման աշխատանքներին:

8. Վարչության աշխատակիցները մասնակացել են տարբեր թեմաներով 11 սեմինար-խորհրդակցությունների, հանդես եկել համապատասխան զեկուցումներով:
ԵՄ համապատասխան կոմիտեների կամ աշխատանքային խմբերի աշխատանքներին մասնակցություն են ունեցել դրանցում ներգրավված վարչության մասնագետները:

5) Նոտարիատի բաժին

Հանրապետությունում գործող իրավաբանական բարձրագույն կրթությամբ 70 նոտարները կատարել են 407491 (2005-ին^ա 387886) նոտարական գործողություն՝ որոնց դիմաց գանձվել է մոտ 613 մլն 325 հազար դրամ (2005-ին^ա 629 մլն 161 հազար դրամ) պետական տուրք:

Բաժնի կողմից իրականացված ստուգման արդյունքներով աշխատանքային տույժի են ենթարկվել 2 նոտար՝ իսկ մի նոտարի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում կատարվել է ծառայողական քննություն, որի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարի կողմից հայց է ներկայացվել դատարան նոտարին զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ:

Ստացել է պատասխանել է 85 դիմում-բողոքների և 50 կազմակերպությունների հարցումների՝ Լեզալացվել է արտասահմանում գործելու համար նախատեսված 10539 փաստաթուղթ^ա գանձելով է շուրջ 52 մլն 695 հազար դրամ (2005-ին՝ 54 մլն 700 հազար դրամ) պետական տուրք:

Նոեմբերին ՀՀ նոտարիատի պալատի հետ համատեղ վարչությունը կազմակերպել է Լատինական նոտարիատի միջազգային միության ներկայացուցիչների ընդունելությունը:

2006 թվականի ընթացքում նախապատրաստել է կազմակերպել է նոտարական գործողությունների մասնակցող թարգմանիչների որակավորման ստուգման քննությունների անցկացումը, ինչպես նաև՝ նախապատրաստվել է հանձնաժողովի հետ անցկացրել է նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննությունները, անց է կացրել սեմինարներ:

6) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչություն

Ապահովել է ՀՀ դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ հաղորդակցությունը

ներկայացված 32 գանգատների գործերով, որոնցից 14-ը վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր են, 7-ը՝ քրեական եւ 11-ը քաղաքացիական գանգատներ:

անգատների կապակցությամբ Եվրոպական դատարանին Վարչության կողմից մշակված եւ Եվրոպական դատարանին ներկայացրած առարկությունների արդյունքում մինչ Հայաստանի դեմ միակ վճիռը կայացվել է միայն 2007 թվականի հունվարի 11-ին Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի՝ գանգատով, որով սակայն Եվրոպական դատարանը նրան որեւէ նյութական փոխհատուցում չի տրամադրել:

Բացի վերը նշված վճռից, Հայաստանի վերաբերյալ կայացվել են 10 որոշումներ, որոնցից՝ 2-ը դիմումատուների ներկայացրած գանգատներն անընդունելի ճանաչելու մասին, 2-ը՝ գանգատները գործերի ցուցակից հանելու մասին, ընդ որում՝ դրանցից մեկով՝ Թումանյանն ընդդեմ Հայաստանի՝ գանգատով Վարչությունը կարողացել է հաշտություն կնքել դիմումատուի հետ, 4-ը՝ գանգատները մասնակի անընդունելի ճանաչելու, եւ 2-ը գանգատները մասնակի ընդունելի ճանաչելու մասին, որոնցով դատարանը, Վարչության կողմից մշակված եւ ներկայացված առարկությունների հիման վրա անընդունելի է ճանաչել դիմումատուների ներկայացրած բողոքների մի զգալի մասի:

Մինչ այժմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված գանգատներից եւ ոչ մեկով վճիռ չի կայացրել, որով Հայաստանի Հանրապետությունը ստիպված է եղել նյութական փոխհատուցում տրամադրել դիմումատուներին:

7) ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

ՔԿԱ տարածքային բաժինների կողմից կատարվել են հետեւյալ ակտային գրանցումները՝

ծննդյան ակտի 38115 (2005-ին՝ 37855) գրանցում.

ամուսնության ակտի 16821 (2005-ին՝ 16622) գրանցում.

ամուսնալուծության ակտի 2930 (2005-ին՝ 2598) գրանցում.

հայրության որոշման ակտի 11951 (2005-ին՝ 11978) գրանցում.

որդեգրման ակտի 171 (2005-ին՝ 146) գրանցում.

մահվան ակտի 27033 (2005-ին՝ 26271) գրանցում.

ՔԿԱ փոխման 625 (2005-ին՝ 531) գրանցում.

ՔԿԱ վերականգնման 2462 (2005-ին՝ 2658) գրանցում:

ՔԿԱ գործակալության հանրապետական արխիվի կողմից ստացվել է 2757 հաղորդում, ստուգվել եւ ընթացք է տրվել 2043 հարցումների եւ 268 դիմումների, տրվել է 298 վկայականի կրկնօրինակ, 1403 ակտի պատճեններ եւ 610 ՔԿԱ առկայության կամ բացակայման տեղեկանքներ:

Վարչության եւ ՔԿԱ տարածքային բաժինների կողմից կատարված ակտային գրանցումների եւ դրանց հետ կապված գործառնությունների համար ընդհանուր գանձվել է 133480419 դրամի (2005-ին՝ 116715860 դրամ) պետական տուրք, իսկ ՔԿԱ վկայականների եւ փաստաթղթերի վրա ապոստիլ դնելու համար 6 մլն 130 հազ. դրամի (2005-ին՝ 5 մլն 570 հազ. դրամ) պետական տուրք

8) Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն

Հաշվետու տարվա ընթացքում պետական ռեգիստրի կողմից գրանցվել է.

2989 առեւտրային իրավաբանական անձ
691 ոչ առեւտրային իրավաբանական անձ
7331 անհատ ձեռնարկատեր
892 անհատ ձեռնարկատերերի տվյալների փոփոխություններ
2 կուսակցություն.
332 հասարակական կազմակերպություն.
9 կրոնական կազմակերպություն
78 հիմնադրամ.
11 իրավաբանական անձանց միություն.
6 արհեստակցական միություն
115 պետական ոչ առեւտրային կազմակերպություն
21 համատիրություն
Հաշվառել է՝

169 իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում եւ 30 հիմնարկ.
67 իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների եւ 38 հիմնարկների
փոփոխությունների կատարում.
72 լրատվամիջոց.
Փոփոխություններ են կատարվել 3035 իրավաբանական անձանց կանոնադրություններում
Լուծարվել կամ դադարեցվել է գործունեությունը
1602 իրավաբանական անձ
100 իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում եւ հիմնարկ, 31634 անհատ
ձեռնարկատեր
ՍՊ ընկերության մասնակիցների գրանցամատյանում կատարվել է 11688 գրառում, տրվել է ՍՊ
ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի 4556 վկայագիր:
Պետական միասնական գրանցամատյանին առընթեր ձեւավորված իրավաբանական անձանց
գործադիր մարմնի ղեկավարների (տնօրեններ, գլխավոր տնօրեններ եւ այլն) գրանցամատյանում
կատարվել է 3683 գրառում:
Պետական միասնական գրանցամատյանից շահագործող անձանց (բացի պետական մարմիններից)
տրամադրվել են տեղեկություններ թվով 1227:
Պետական միասնական գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման մասով
պատասխանվել է պետական մարմինների մոտ 3150 հարցումների, որոնց դիմաց պետական տուրք չի
գանձվել:
Կատարված գործառույթների գծով պետական բյուջե է գանձվել⁹ 121 558 500 դրամ (2005-ին⁹ 118 022
000 դրամ) պետական տուրք:

9) ԴԱՀԿ ծառայություն

Մարզային բոլոր բաժիններում ներդրել է էլեկտրոնային փոստի վարման համակարգ եւ
համապատասխան ծրագրային ապահովում: Այդ նպատակով մարզային բաժիններին տրամադրվել
են ԴԱՀԿ ծառայության միջոցներով համապատասխան քանակության համակարգիչներ,
կազմակերպվել է համակարգչային օպերատորների ուսուցում՝ էլեկտրոնային համակարգի
գործավարման եւ համակարգչի հնարավորությունների լիարժեք օգտագործման ուղղությամբ:

ԴԱՀԿ ծառայության կենտրոնական մարմնի տեղեկատվության եւ օրենսդրության կատարելագործման բաժնում ստեղծվել է համակարգչային կենտրոն ԴԱՀԿ ծառայության կողմից կատարողական վարույթներով պարտապանի սեփականության իրավունքով պատկանող շարժական, անշարժ գույքը եւ դրամական միջոցները հայտնաբերելու նպատակով բոլոր հարցումները՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոն, մաքսային պետական կոմիտեի տեղեկատվության եւ օպերատիվ ինֆորմացիայի վարչություն, հարկային պետական ծառայություն, հանրապետության բոլոր առևտրային բանկերին եւ պետական ռեզիստր կատարվում են էլեկտրոնային կապուղու միջոցով:

Վերջին երեք ամիսների ընթացքում հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացվել է 145,5 մլն. դրամի գույք:

Ատեստավորվել են 74 հարկադիր կատարողներ, որոնցից՝

- 65 հարկադիր կատարող համապատասխանում են զբաղեցրած պաշտոնին,
8 հարկադիր կատարողների ատեստավորումը հետաձգվել է եւ գործուղվել են վերապատրաստման,
1 հարկադիր կատարողի վերաբերյալ հանձնաժողովը որոշում է կայացրել, որ չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին:

Աշխատանքային բավարար ցուցանիշների եւ ծառայողական պարտականությունների նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի համար ծառայության 124 աշխատակիցներ ղեկավարության կողմից խրախուսվել են, 63 հարկադիր կատարողների շնորհվել են սկզբնական հերթական կոչումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում բոլոր կատարողական վարույթներով բռնագանձվել եւ պահանջատերերին են փոխանցվել 3.405.271,3 հազար դրամ:

Կատարված բռնագանձումներից պետական բյուջեի մուտքերը կազմել են 721.957,0 հազար դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ 1.001.909,3 հազար դրամ եւ իրավաբանական անձանց օգտին՝ 1.681.404,3 հազար դրամ:

ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հայցերով 2006թ.-ին ընթացքի մեջ գտնվող 1455 կատարողական վարույթներով 5.068.589,5 հազար դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 267.851,7 հազար դրամ $\approx 9.4\%$ -ը:

ՀՀ Կառավարությանն առընթեր Մաքսային պետական կոմիտեի օգտին 332 կատարողական վարույթներով 367.005,0 դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 41.187,0 հազար դրամ (28,6 %-ը):

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության օգտին հաշվետու ժամանակաշրջանում ընթացքի մեջ գտնվող 138 կատարողական վարույթներով 624.119,0 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 68.248,0 հազ. դրամ (36.4%ը):

Դատախազության հայցերով 192 կատարողական վարույթներով 1.615.942,7 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 39.938,7 հազ. դրամ: 122 կարճված եւ ավարտված կատարողական վարույթներով չվերականգնված մնացորդ գումարը կազմել է 295.937,4 հազ. դրամ:

Դատախազության հայցերով հարուցված կատարողական վարույթներով՝ իրական բռնագանձման ենթակա գումարը կազմել է 909.410,8 հազ. դրամ, որից փաստացի բռնագանձվել է 39.938,7 հազ. դրամ:

2006թ. ընթացքում քրեական գործերով հարուցված կատարողական վարույթներով իրական բռնագանձման ենթակա գումարը կազմել է 1.774.055,1 հազ. դրամ, որից փաստացի բռնագանձվել է 148.711,4 հազ. դրամ, կամ 8.4%-ը:

2006թ. ֆիզիկական անձանց օգտին՝ ընթացքի մեջ գտնվող կատարողական վարույթներով իրական բռնագանձման ենթակա գումարը կազմել է 3.194.139,8 հազ. դրամ, որից փաստացի բռնագանձվել է պահանջատերերին է փոխանցվել 1.001.909,3 հազ. դրամ, որը կազմում է բռնագանձման ենթակա գումարի 31.4%-ը:

Իրավաբանական անձանց հայցերով 13.336 կատարողական վարույթներով 15.324.571,8 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 1.681.405,0 հազ. դրամ: 9.159 կարճված եւ ավատված կատարողական վարույթներով (ընդհանուրի 68.6%-ը) չվերականգնված մնացորդ գումարը կազմել է 4.905.164,0 հազ. դրամ:

Գույքային բռնագանձումների վերաբերյալ 69.431 կատարողական վարույթներով՝ 43.060.157,1 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարից փաստացի բռնագանձվել է 3.405.271,3 հազ. դրամ: Այսպիսով, հաշվետու ժամանակաշրջանում գումարի բռնագանձման վերաբերյալ կատարողական վարույթներով իրական բռնագանձման ենթակա գումարը կազմել է 18.208.559,4 հազ. դրամ, որից փաստացի բռնագանձվել է 3.405.271,3 հազ. դրամ, որը կազմում է բռնագանձման ենթակա գումարի 18.7 %-ը:

2006թ. հունվարի 1-ի դրությամբ բոլոր կատարողական վարույթների մնացորդը կազմել է՝ 26.658 կատարողական վարույթ, տարվա ընթացքում հարուցվել են 53.556 կատարողական վարույթ, ընդամենը 2006թ. ընթացքում ԴԱՀԿ ծառայությունում ընթացքի մեջ են եղել 80.214 կատարողական վարույթներ, ընդ որում՝ նշված կատարողական վարույթների բացարձակ մեծամասնությունը՝ 62.7%-ն այն կատարողական վարույթներն են, որոնց բռնագանձման ենթակա գումարը կազմում է միջինը 1.0-50,0 հազ. դրամ:

Կատարողական գործողությունների ընթացքում կարճվել են 22.904 եւ ավատվել 23.492 կատարողական վարույթներ: Ընդամենը՝ հաշվետու ժամանակաշրջանում կարճվել եւ ավատվել են 46.396 կատարողական վարույթ, կամ բոլոր կատարողական վարույթների 57.8%-ը:

2006թ. ընթացքում յուրաքանչյուր հարկադիր կատարողի միջին ծանրաբեռնվածությունը կատարողական վարույթներով կազմել է 300 կատարողական վարույթ: Մուտք է եղել 12.018 դիմում, որից՝ 986-ը դիմում-բողոքներ են, իսկ 1.507 կրկնակի դիմում-բողոքներ վերցվել են հսկողության:

Ստացվել են 127.247 փաստաթղթեր, էլք է արվել 151.692 փաստաթուղթ:

10) Քրեակատարողական ծառայություն

01.01.2006թ. դրությամբ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների եւ կալանավորվածների թվաքանակը կազմում է 3083 մարդ (2005-ին՝ 2873 մարդ), որից՝

կալանավորված անձիք՝ 691 անձ, այդ թվում.

22 անչափահաս,

23 կին,

դատապարտված անձիք՝ 2392 անձ, այդ թվում՝

70 ցմահ ազատագրկման դատապարտված:

85 կին.

24 անչափահաս:

Հասարակական եւ միջազգային կազմակերպությունների, ՋԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կատարվել են մոտ 223 այցելություններ (2005-ին՝ 151) քրեակատարողական հիմնարկներ, որոնց արդյունքում իրականացվել են մշակութային եւ կրթական բնույթի միջոցառումներ՝ ցույց է տրվել բժշկական եւ նյութական օգնություն:

Ըստ քրեակատարողական հիմնարկների, կատարվել են շին.վերանորոգման եւ բարելավման աշխատանքներ:

ՔԿ հիմնարկներում գրանցվել են 47 (16-ը քաղաքացիների կողմից) հանցագործության դեպքեր 49 անձանց կողմից եւ հարուցվել են նույնքան քրեական գործեր: Կատարված 47

հանցագործություններից կանխարգելիչ բնույթի են 35-ը, որից՝ 2-ը փախուստի փորձերի կանխում են, 16-ը՝ թմրամիջոցներ փոխանցելու փորձի դեպքեր, իսկ 17-ը՝ կալանավորված անձանց եւ դատապարտյալների մոտից խուզարկության արդյունքում առգրավված թմրամիջոցների: 188-ով նվազել է կարգապահական խախտում թույլ տված անձանց թիվը,

12) Փորձագիտական կենտրոն

Փորձաքննությունների կատարման համար Կենտրոնում գրանցվել են 4100 մուտքեր, որոնցից 169-ի կատարումը փոխանցվել է 2007թ.: Նախորդ տարվանից փոխանցված մուտքերի թիվը կազմել է 230: Ավարտվել են 4161 մուտքեր:

Նշված տվյալների համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 2005թ.

համեմատությամբ 2006թ. մուտքերն ավելացել են 41-ով, իսկ կատարմամբ ավարտված մուտքերը՝ 198-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտված 4161 մուտքից 4001-ը ավարտվել է փորձաքննության կատարմամբ, իսկ 160-ը՝ վերադարձվել է առանց կատարման: Վերջիններից՝ 90-ը վերադարձվել են առանց կատարման՝ օբյեկտները չտրամադրելու կամ օբյեկտները ոչ պատշաճ լինելու, իսկ 70-ը՝ այլ պատճառներով:

Փորձաքննությունների կատարման ծառայությունների մատուցման գծով պետական պատվերի շրջանակներում Կենտրոնում կատարվել են 3672 դատական փորձաքննություններ, իսկ ոչ պետական պատվերով՝ 1750 փորձաքննություններ եւ հետազոտություններ, այն դեպքում, երբ 2005թ. նշված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 3543 եւ 1648:

13) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ

2006 թվականի ընթացքում Ինստիտուտում վերապատրաստվել է 180 քրեակատարողական եւ 160 քաղաքացիական ծառայող:

Ինստիտուտի կառուցվածքում գործող իրավաբանական քոլեջը, որը գործող կրթական

չափանիշներին համապատասխան պատրաստում է կրտսեր իրավաբաններ, քրեակատարողական

ծառայության համար 2006 թվականի ընթացքում ունեցել է 10 շրջանավարտ համալրվել է 26 նոր ուսանողներով:

14) Դատաիրավական բարեփոխումների ԾԻԳ՝ՊՀ

Տարվա արդյունքներով պետական բյուջեով վարկային ծրագրի բոլոր բաղադրիչներով ծախսերի գծով նախատեսված ցուցանիշները ԱՄՆ դոլարի հաշվարկային արժույթի դեպքում ԾԻԳ-ի կողմից փաստացի գերակատարվել են 1015.6 հազ. ԱՄՆ դոլարի չափով, ինչի արդյունքում Դատաիրավական բարեփոխումներ՝ վարկային ծրագրի կատարումը պետական բյուջեով նախատեսվածի համեմատ կազմել է շուրջ 158.94%:

Ըստ վարկային ծրագրի բաղադրիչների 2006 թվականի ընթացքում ծրագրով հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Բաղադրիչ 1. Դատական համակարգի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում.

Ընդհանուր նկարագիր

2006 թվականին ավարտվել են ԾԻ-ի կողմից վարձված “Luxoft” IBS Group, Ռուսաստան/Լյուքսաֆտ-Ա՝ ՍՊԸ, Հայաստան/Tewglow՝ Ltd., Մեծ Բրիտանիա ընկերություններից կազմված կոնսորցիումի կողմից իրականացվող խորհրդատվական ծրագիրը՝ դատական համակարգի կառավարման, գործերի հոսքերի ավտոմատացման նպատակով համակարգչային ծրագրի մշակման ուղղությամբ՝ ‘CAST’ աշխատանքային անվանումով: Տվյալ համակարգչային ծրագրի մշակումը հաջողությամբ ավարտվել է եւ ծրագիրը ընդունվել է շահագործման ՀՀ դատական դեպարտամենտի կողմից: Միաժամանակ ԾԻԳ-ի կողմից վարձված խորհրդատուի կողմից նախ մշակվել է մի շարք արմատական օրենսդրական ակտերի նախագծեր, որոնց մի մասն արդեն իսկ ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից, իսկ մյուս մասը ներկայումս ներկայացված է ՀՀ Ազգային Ժողովի քննարկմանը: Այդ օրինագծերի շարքում է նաեւ Դատական օրենսգրքի նախագիծը: Դատարանների ավտոմատացման երկրորդ փուլի շրջանակներում 2006թ. երկրորդ կիսամյակում ԾԻԳ-ի կողմից ներկրվել է նաեւ համակարգչային եւ կազմտեխնիկայի խոշոր խմբաքանակ: Արդյունքում անհրաժեշտ համակարգչային տեխնիկա է տեղադրվել է նաեւ ծրագրի շրջանակներում վերակառուցված բոլոր դատարանների /բացառությամբ Երեւանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի/ շենքերում: Նույն պայմանագրի շրջանակներում բոլոր դատարաններում տեղադրվել է նաեւ տեղային համակարգչային ցանց, ինչը հնարավորություն է ստեղծել կապ հաստատել ‘CAST’ համակարգչային կառավարման ծրագրի հետ: Ծրագրի շրջանակներում ներկրվել էւ ՀՀ վճռաբեկ դատարանի շենքում տեղադրվել է նաեւ ‘CAST’ համակարգչային կառավարման ծրագրի տվյալների բազայի կենտրոնական հանգույցը: ՀՀ կառավարության որոշման պահանջներից ելնելով անհրաժեշտ քանակի հեռախոսային կայաններ են տեղադրվել ծրագրով վերակառուցված բոլոր դատարանների շենքերում, ինչպես նաեւ ծրագրում չներառված որոշ այլ դատարանների շենքերում:

Բաղադրիչ 2. Դատարանների ենթակառուցվածքի վերականգնում.

Ընդհանուր նկարագիր

2006 թվականի ընթացքում ծրագրով ընդգրկված դատարաններից շահագործման է հանձնվել Երեւանի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանի, Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի, Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի Էջմիածին քաղաքի նստավայրի շենքերը: Ավարտին է հասցվել նաեւ Երեւանի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանի շենքի կառուցումը եւ ներկայումս կատարվում են դրա փաստաթղթային ձեւակերպման աշխատանքները:

Միաժամանակ, նույն բաղադրիչի շրջանակներում իրականացվել են մի շարք տեղական եւ միջազգային մրցույթներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով իրականացվել են կառուցվող եւ վերակառուցվող շենքերը կահավորելու եւ տեխնիկապէս հագեցնելու նպատակով ապրանքների գնումներ:

Բաղադրիչ 3. Դատավորների եւ դատարանների աշխատակազմերի վերապատրաստում

Ընդհանուր նկարագիր

2006 թվականի ընթացքում տվյալ բաղադրիչի շրջանակներում ԾԻԳ-ի կողմից վարձված օտարերկրյա խորհրդատուն շարունակվել է աշխատանքներ իրականացնել դատական բարձրագույն դպրոցի հիմնադրման ուղղությամբ՝ կարիքները գնահատելու առումով: Միաժամանակ, խորհրդատուի կողմից իրականացվել է դատական դպրոցի զարգացման վերաբերյալ մաստեր-պլանի մշակում: Նախկինում որոշում էր կայացվել դատական դպրոցը ժամանակավորապէս տեղավորել Երեւանի Աջափնյակ եւ Դավիթաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի շենքի երրորդ հարկում: Այդ նպատակով ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել որոշ ապրանքներ ուսուցման բնականոն գործընթացը կազմակերպելու նպատակով: Մասնավորապէս, կնքված պայմանագրերի շրջանակներում մատակարարվել եւ դպրոցում տեղադրվել է անհրաժեշտ կահավորումը եւ համակարգչային տեխնիկան:

Բաղադրիչ 4. Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կատարելագործում.

Ընդհանուր նկարագիր

Ծրագրի շրջանակներում 2006 թվականի ընթացքում շարունակվել է ԴԱՀԿ ծառայության գործերի կառավարման հատուկ կիրառական համակարգչային ծրագրի մշակման ուղղությամբ աշխատանքների կատարումը: 2006թ. նշված ծրագիրը շահագործման է ընդունվել ԴԱՀԿ ծառայության կողմից: Մշակվող ծրագիրը կիրառելու եւ սպասարկելու նպատակով ԾԻ-ի կողմից իրականացվել է նաեւ համակարգչային տեխնիկայի լրացուցիչ խմբաքանակի գնում:

Բաղադրիչ 5. Իրավական տեղեկատվություն.

Ընդհանուր նկարագիր

2006թ. շարունակվել է տեղեկատվական տեխնոլոգիաների գծով անհատ խորհրդատուի կողմից ծառայությունների մատուցումը՝ 2005թ. դեկտեմբերից շահագործման հանձնված ՀՀ օրենսդրական բազայի տեղեկատվական որոնողական համակարգի (ARLIS) հետագա զարգացման, ինչպէս նաեւ այլ համակարգչային ծրագրերի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

Բաղադրիչ 6. Հանրային իրազեկության եւ հանրային կրթության քարոզարշավ
Ընդհանուր նկարագիր

2006 թվականի ընթացքում ՀԲ-ի հետ նախնական համաձայնության գալուց հետո սույն բաղադրիչով ծրագիր իրականացնող խորհրդատուի հետ ուղղակի պայմանագիր կնքելու միջոցով ձեռք են բերվել պայմանագրով նախատեսված Իմ Իրավունքը՝ հաղորդաշարի պատրաստի հեռուստահաղորդումները: 2006 թվականին յուրաքանչյուր շաբաթ շարունակվել է այդ հաղորդումների հեռարձակումը ՀՀ հանրային հեռուստատեսությամբ:

Բաղադրիչ 7. Ծրագրի կառավարում.
Ընդհանուր նկարագիր եւ Ֆինանսական արդյունքները

2006 թվականի ընթացքում ԾԻ-ը իրականացրել է ծրագրի կառավարումը առաջին վարկային համաձայնագրով, ինչպես նաև երկրորդ վարկային ծրագրի նախապատրաստման նամակ-համաձայնագրով սահմանված կարգով:

2006 թվականի ընթացքում ԾԻ-ի պահպանման ծախսերի նպատակով նախատեսված ծախսերը ծրագիրը նախանշվածից ավել չափով իրականացնելու, ինչպես նաև նոր վարկային ծրագիր նախապատրաստելու կապակցությամբ հետ կապված ավելացվել են:

Տարվա բյուջեով նախատեսված 72.5 հազ. ԱՄՆ դոլարի դիմաց փաստացի կատարված ծախսերը կազմել են 171.1 հազ. ԱՄՆ դոլար: Տարվա ընթացքում ԾԻ-ի պահպանման ուղղությամբ կատարվել են 126.0 հազ. ԱՄՆ դոլարի աշխատանքներ, որի դիմաց կատարվել են վճարումներ 133.2 հազ. ԱՄՆ դոլարի չափով: Կատարված աշխատանքների եւ վճարումների միջեւ տարբերությունը պայմանավորված է ապրանքների մատակարարների կանխավճար տրամադրելու հանգամանքով, որի դիմաց ապրանքների մատակարարումը կատարվելու է 2007թ.:

2006թ. դեկտեմբերի 31-ին հաջողությամբ ավարտվել է Դատախիրավական Բարեփոխումներ՝ 1-ին վարկային ծրագիրը: Վարկային ծրագրի միջոցների իրացումը կազմում է ավելի քան 99 տոկոս: Ներկայումս կատարվում է նշված ծրագրով մատակարարների եւ կապալառուների հանդեպ դրամական պարտավորությունների վերջնական ձեւակերպումները, որի համար Համաշխարհային Բանկի կողմից սահմանվել է վերջնաժամկետ՝ 30 ապրիլի 2007թ.:

ՀՀ ԱԺ կողմից թիվ Q5380 նամակ-համաձայնագիրը վավերացնելուց հետո 2006թ. դեկտեմբերից Դատախիրավական Բարեփոխումներ ԾԻ՝ ՊՀ-ի կողմից սկսվել են աշխատանքներ Դատախիրավական Բարեփոխումներ՝ 2-րդ վարկային ծրագրի նախապատրաստման ուղղությամբ: Հիմնական վարկային համաձայնագրի ստորագրումը նախատեսվում է 2007թ. առաջին կիսամյակում: Ներկայումս ավարտին են մոտենում Համաշխարհային Բանկի հետ բանակցությունները վարկային համաձայնագրի պայմանների վերաբերյալ:

ՀՀ արդարադատության նախարարություն
23 հունվարի 2007 թվական